ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՊԻՐԱՆՏ ԶԱՐՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սննդարդյունաբերությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության խոշորագույն ճյուղերից մեկն է, որի նպատակն է բավարարել բնակչությանը որակյալ սննդամթերքով: Սննդարդյունաբերության ոլորտում ներդրումների ընդլայնումը նպաստում է երկրի պարենային անվտանգության ապահովմանը և բնակչության առաջնային պահանջմունքների բավարարմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սննդի արտադրության ոլորտում իրականացված օտարերկրյա և մասնավոր ներդրումների ծավալը բավականին փոքր է և զգալիորեն զիջում է էներգետիկայի, հանքարդյունաբերության, հեռահաղորդակցության և մի շարք այլ ոլորտներում իրականացվող ներդրումների ծավալներին: Չնայած այս հանգամանքին, ակնհայտ է, որ սննդարդյունաբերության ոլորտը Հայաստանի տնտեսության համար բարձր կարևորություն ներկայացնելուց բացի ունի նաև բավականին մեծ տնտեսական ներուժ: Ելնելով վերոնշյալից, կարելի է եզրակացնել, որ Զարմիկ Մելիքյանի ատենախոսության թեման արդիական է:

Հետազոտության հիմնական նպատակն է՝ ներկայացնել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, որոնք կնպաստեն ներդրումային ոլորտային ծրագրերի արդյունավետ կառավարմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը: Նշված նպատակի իրագործմանն են ուղղվում հետևյալ հիմնական խնդիրները.

- բացահայտել սննդարդյունաբերության զարգացման ռազմավարությունից բխող ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, վերհանել մրցակցային ներդրումային գործունեության հնարավորությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- դասակարգել սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի ձևավորման վրա ազդող գործոնները ըստ ներդրումային գործունեության վրա ներազդեցության աստիճանի,

- մշակել ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ, հնարավորություն ստեղծելով ներդրումային միջավայրը ձևավորող բաղադրիչների գնահատման արդյունքում բացահայտելու ներդրումային ուղղությունների գերակայությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- մշակել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ, ուղղված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում առաջացող հավանական վնասների գնահատմանը և վերահսկմանը,
- հիմնավորել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ, հիմնված ոչ միայն ներդրումների ֆինանսատնտեսական հատույցի, այլև այդ գործընթացին առնչվող ներքին ու արտաքին շահառուների սոցիալ-տնտեսական սպասումների վրա:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, այն ընդգրկում է 32 գծապատկեր և 16 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 128 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու արդյունքները, դրանց գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային միջավայրի ձևավորումը Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» գլխում վերլուծվում է Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի գրավչության աստիճանը սննդարդյունաբերության ոլորտում, ուսումնասիրվել են ոլորտի առանձնահատկությունները: Առաջին գլխի առաջին բաժնում հեղինակը ներկայացրել է Հայաստանի սննդարդյունաբերության ոլորտի ռազմավարական զարգացման միտումները և օտարերկրյա ներդրումները, ուսումնասիրել է ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքը, վերլուծել է սննդամթերքի արտադրության ծավալները և շարժընթացը:

Նույն գլխի 2-րդ բաժինը վերնագրված է «Հայաստանի ներդրումային միջավայրի գրավչությունը և գնահատման մոտեցումները»: Այս բաժնում ներկայացվում է ներդրումային միջավայրի կառուցվածքը, ուսումնասիրվում է Հայաստանի ներդրումային միջավայրի գրավչությունը և դիրքը համաշխարհային տնտեսությունում: Աշխատանքի առաջին գլխի 3-րդ բաժնում հեղինակը անրադարձ է կատարել ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի առանձնահատուկ բնութագրիչներին:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի որակական գնահատման հիմնախնդիրները» գլխում իրականացվել է սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ներուժի գնահատում և ներկայացվել են ներդրումային միջավայրի և ներդրումային ծրագրերի որակի վարկանիշային գնահատման մոտեցումները: Երկրորդ գլխի առաջին բաժնում իրականացվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ներուժի գնահատումը և ուրվագծվել են ներդրումային ներուժի բարելավման մի շարք ուղղություններ:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ բաժնում ուսումնասիրվել է «Ներդրումային միջավայրի և արտաքին առևտրի փոխառնչության շրջանակը Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում»: Արտահանման և ներմուծման շարջընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին կաթնամթերքի, մսամթերքի, հրուշակեղենի և հացամթերքի գծով արտահանում/ներմուծում համեմատության մեջ հանրապետությունում գրանցվում է բացասական սալդո: Արտահանման և ներմուծման դրական տարբերության միտում է դիտվում միայն պահածոների արտադրության գծով, որտեղ ներմուծված պահածոները կազմում են արտահանվածների մոտ 70%-ը:

Այս գլխի երրորդ բաժինը վերնագրված է «Ներդրումային միջավայրի և ներդրումային ծրագրերի որակի վարկանիշային գնահատման մոտեցումները»: Այս բաժնում իրականացվել է Հայաստանի սննդարդյունաբերության ոլորտը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություն, 10 տարիների տվյալների հիման վրա կառուցվել են դինամիկային շարքի մոդելներ և վերլուծվել են ուսումնասիրվող ցուցանիշների մեջև առկա կապերը: 2009-2018թթ. տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ սննդարդյունաբերության ոլորտում կատարված ներդրումների ավելացումը նպաստել է արտահանված սննդամթերքի ծավալի մեծացմանը: Այս մասին է փաստում ինչպես համապատասխան ցուցանիշների աճի միտումը, այնպես էլ կոռելացիայի գործակիցը: Սննդարդյունաբերության ոլորտում

ներդրումային ուղղությունների իրականացման հիմնավորվածության գնահատման համար առաջարկվում է նաև կատարել ներդրումային ծրագրերի վարկանիշավորում, որի համար մշակվել է ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ: ՈՒսումնասիրությունների արդյունքում ՀՀ սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի առավել բարենպաստ ոլորտ է գնահատվել պահածոյագործությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումային միջավայրի կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում» գլխում քննարկվել են ագրոպարենային համակարգի ներդրումային ռիսկերի գնահատման և ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային հիմնախնդիրները: Այս գլխի առաջին բաժինը վերնագրվել է «Ագրոպարենային համակարգում ներդրումային միջավայրի կառավարման առանձնահատկությունները»: Այս բաժնում ներկայացվել են սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման մոտեցումները, սահմանվել են արդյունավետության շեմեր և ուսումնասիրվել են ներդրումային միջավայրի կառավարման հիմնական գործառույթները:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ բաժինն ուղղված է Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման հիմնախնդիրների առաջադրմանը և լուծման ուղիների բացահայտմանը: Ունենալով կիրառման երկարաժամկետայնություն և պահանջելով խոշոր ֆինանսական ռեսուրսներ, ներդրումները իրենց ծավալներով հաճախ գերազանցում են նախահաշվային ցուցանիշները և դժվարություններ ստեղծում ներդրումային գործընթացի կայունությունն ապահովելիս: Ներդրումային ռիսկերի նվազեցման նպատակով առաջարկվում է սննդարդյունաբերության ոլորտում ձևավորել նաև ներկազմակերպական պահուստային ֆոնդեր, որոնք հնարավորինս կփոխհատուցեն ռիսկային վնասները: Կազմակերպության ֆինանսական կայունության տեսանկյունից նպատակահարմար է համարվում, երբ պահուստային կապիտալը կազմում է ընդհանուր սեփական կապիտալի 5%-ից ավելին: Ներդրումային գործունեության հետ կապված պահուստային կապիտալին արվող հատկացումների չափաբաժինը որոշելիս, ներդրումային ռիսկերի գնահատման հետ մեկտեղ, առաջարկվում է հաշվարկել նաև պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության գործակիցը, որը պետք է տատանվի 5-15%-ի սահմաններում՝ կախված ստանձնած

պարտավորությունների ռիսկայնության աստիճանից: Նման մոտեցմամբ հնարավորություն է ստեղծվում հաշվարկել պահուստային կապիտալի հատկացումների արժեքային մեծությունը՝ հիմնվելով պարտավորությունների գումարի վրա: Ներդրումների ռիսկայնության չափման համար առաջարկվել է նաև սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային ռիսկերի գործակցային գնահատման 4 փուլանոց մեխանիզմ:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ բաժինը վերնագրվել է «Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային հիմ-նախնդիրները»: Այս բաժնում ուսումնասիրվել են սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի կառավարման ուղղությունները, ներդրումային միջավայրի վրա ներազդեցության ուղիները, ինչպես նաև իրականացվել է Հայաստանի պահա-ծոյագործության ոլորտի ներդրումային միջավայրի SWOT վերլուծությունը: Հետա-զոտության արդյունքներն ամփոփվել են «Եզրակացություններ» բաժնում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հեղինակի ներկայացմամբ՝ ատենախոսությունում իրականացված հետա-զոտությունների ու վերլուծությունների հիման վրա ստացվել է հետևյալ գիտական նորույթը.

- բացահայտվել են սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, գնահատվել է ներդրումային միջավայրի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ ուղղված արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը,
- ներդրումային ծրագրերի իրականացման առաջնահերթությունների ընտրության նկատառումներով մշակվել է ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ,
- մշակվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ՝ ուղղված ներդրումային ծրագրերից բխող հավանական վնասների կանխարգելմանը «գյուղատնտեսական մթերքների արտադրություն - վերամշակում - իրացում» տնտեսական գործունեության շղթայում,
- մշակվել են Հայաստանի սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ:

Ներկայացված գիտական նորույթն բնութագրում է հետազոտության նպատակը, իսկ արդյունքները գիտագործնական առումով հիմնավորված են:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներդրումային միջավայրի բարելավման և օտարերկրյա ու մասնավոր ներդրումների ներգրավման հիմնախնդիրները բացահայտվել են, սակայն չեն համակարգվել և դասակարգվել: Աշխատանքում չեն նեռարվել միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, բացի այդ առաջարկված գործիքակազմի ընտրությունը չի հիմնավորվել:

1. Ատենախոսը ընգծում է, որ "*ներդրողների համար առաձնային խնդիր են հանդիսանում նաև իրականացված ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման մոտեցումները:*" Սակայն, հեղինակի կողմից ներկայացված մոտեցումները, մասնավորապես ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման գործակիցները հայտնի են՝ օգտագործվել են հաշվարկի չորս բանաձևեր առանց հղում կատարելու սկզբնաղբյուրի վրա (տես սեղմագրի աղյուսակ համար 4, էջ. 14 և ատենախոսության աղյուսակ համար 3.1.1 էջ. 88): Ատենախոսը ներկայացրել է առաջարկվող արդյունավետության շեմերը, սակայն չի հիմնավորել դրանք:
2. Հեղինակը օգտագործել է ցուցանիշներ, տալով դրանց լատինատառ հապավումները և հայերեն ոչ ճիշտ թարգմանությունները, մասնավորապես՝ ARR – Accounting Rate of Return (Бухгалтерская норма доходности) - Ներդնումային ծրագրի շահութաբերություն, NPV – Net present value (Чистая приведенная стоимость) – զուտ ներկա արժեք: Ատենախոսը հաշվի չի առել տվյալ ոլորտի համար կիառելի հետևյալ գործիքները. Microsoft Project, Open Plan Professional, Spider Project, Time Line, CA Super Project, Project Scheduler, ինչպես նաև UNIDO-ի մեթոդանաբությունը:
3. Ինչպես նշվել էր, հեղինակը անդրադարձ չի կատարել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման միջազգային փորձի ուսումնասիրությանը: Այդ համատեքստում նպատակահարմար կլիներ ատենախոսությունում ներկայացնել Եվրասիական տնտեսական միության երկրների հետ ձևավորված կապերը, ինչպես նաև անդրադարձ կատարել առաջիկա ներդրումային ծրագրերի իրականացմանը և վերջիններիս ազդեցությանը Հայաստանի սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջվայրի վրա:
4. Օգտագործված գրականության ցանկում առկա են ուսումնական ձեռնարկներ, սակայն առկա չեն մի շարք հետազոտություններ, որոնք առնչվում են թեմայի հետ: Օրինակ. *«Հայաստանի ներդրումային միջավայրը. իրավական դաշտը եւ առկա*

հիմնախնդիրները»[1] հետազոտությունում շարադրվում են սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման առանցքային խնդիրները՝ արտադրանքի ցածր գնային մրցունակությունը, որի ակունքներում անարդյունավետ եւ ցածր արտադրողական գյուղացիական տնտեսություններն են[2]:

5. Միջազգային լավագույն փորձը վկայում է, որ կլաստերային մոտեցումը հատկապես միկրո եւ մեզո (ճյուղային, տարածքային) մակարդակներում մրցունակության բարձրացման արդյունավետ քաղաքականության հիմք է հանդիսանում: Այս առումով կարեւորվում է ոլորտում կլաստերային ներուժի գնահատման, կլաստերային նախաձեռնությունների նույնականացման եւ խթանման, կլաստերների ձեւավորման գործընթացում մասնակիցներին խորհրդատվական, տեղեկատվական, լոգիստիկական, ֆինանսական եւ այլ բնույթի աջակցության տրամադրման կառուցակարգերի մշակումը եւ համապատասխան քաղաքականության իրագործումը: Ատենախոսությունը կշահեր, եթե վերոգրյալ հարցերի շուրջ ատենախոսը հայտներ իր մոտեցումները և հիմնավորեր առաջարկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զարմիկ Վահանի Մելիքյանի «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատություն է և վերոհիշյալ դիտողությունների վերաբերյալ ատենախոսի ակնկալվող բացատրությունները հաշվի առնելով չեն նսեմացնի աշխատանքի արժանիքները:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակված հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից: Ատենախոսության արդյունքային դրույթները կարող են օգտագործվել հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից սննդարդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականության իրականացման բնագավառում, ինչպես նաև գիտական հետազոտությունների և ուսումնական նպատակների համար:

---

[1] Հետազոտություն / Ա.Մանուկյան, Ա.Քթոյան. -Եր. Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2019.- 70 էջ

[2] Տես՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ուղիները. քա-ղաքականության բարելավման առաջարկություններ, Ագրոբիզնեսի հետազոտու-թյունների եւ կրթության միջազգային կենտրոն, Երեւան, 2017

Զարմիկ Վահանի Մելիքյանի «Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունն իր գիտական մակարդակով, հիմնավորվածությամբ, արդիականությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Գ. Ա. Վահանյան**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Արշալույսի Վահանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար
գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յ. Բաղդասարյան**
12 հոկտեմբերի 2020թ.